ՔՆՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Н. Марръ. Тексты и Разысканія по Армяно—Грузинской Филологіи. Книга X. О Роскопкахъ и Работахъ въ Ани лѣтомъ 1906 г. СП. 1907.

Այս գիրքը պրոֆ. Մառի զեկուցումն է 1906 թուի Անիում կատարած պեղման մասին, որ նախ կարդացել է Ռուսաց կայսերական հնագիտական ընկերութեան մէջ և ապա Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդում։ Պրոֆ. Մառը առաջին անգամ չէ հանդէս գալիս Անիի պատմական և հնագիտական ուսումնասիրութեան խնդրում։ Դեռ ևս 1898 թ. նա մի յօդուած էր նուիրել Անիի պատմական-հնագիտական ուսումնասիրութեան հանգուցեալ Զանչեանի հրատարակած Братская Помощь ժողովածուի մէջ, որ նորա ընդարձակ մենագրութեան մի հատուածն էր միայն։ Այդտեղ Անիի աւերակները «Հայ արուեստի թանգարան» էր անուանել նա, զբաղուելով միայն Անիի արտաքին պատմութեամբ։ Ներկայ աշխատութեան մէջ նա զբաղւում է գլխաւորապէս Գագիկ Ա. 1001 թ. շինած տաճարով, յատկապէս տաճարի հիմնադիր թագաւորի արձանի դլխի փաթթոցի (չալմայի) ուսումնասիրութեամբ։ Տարաբաղդաբար տաճարի գեղարուեստական և ճարտարապետական նկարագրութեան և գնահատութեան մէջ համառօտ է, բայց նորա տուած ծանօթութիւններն ու պատկերները որոշ գաղափար են տալիս մեզ այդ ձևի տաճարների մասին և բաւական նիւթ Զուարթնոց եկեղեցու հետ համեմատելու համար։

Ժամանակակից պատմիչը՝ Ասողիկ՝ իւր պատմութեան վերջում տուած հակիրճ տեղեկութեան մէջ, հաղորդել էր արդէն, որ այդ եկեղեցին շինուած էր Քաղաքուդաշտի Ս. Գրիգորի (Զուարթնոց) նմանութեամբ, այժմ Մառի

և մեր միաբանակից Խաչիկ վարդապետի պեղումները ոչ միայն կատարելապէս հաստատում են այս իրողութիւնը, այլ և այդ երկու աւերակները փոխադարձաբար իրար լրացնում և համեմատութեան նիւթեր տալիս։ Ցարաբաղդաբար Խաչիկ վարդապետը դեռ ևս չի հրատարակել իւր կազմած ալբոմն ու աւերակների պեղման պատմութիւնը։ Այդ պակասը մասամբ լրացրել է մեր մի ուրիշ միաբանակիցը՝ Տ. Մեսրոպ վարդապետ. նախ 1903 թ. տեղեկագիր կազմելով Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերութեան համար, ապա «Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ» աշխատութեամբ «Հանդէս Ազգագրականի» XV և XVI գրքերի մէջ բազմաթիւ պատկերներով։ Նոյն աշխատութիւնը շատ հմտառօտ հրատարակեց նաև հայերէն, ռուսերէն և գերմաներէն լեզուներով։ Այսպիսով միաժամանակ երկու բանասէր զբաղուել են մի և նոյն տիպի ճարտարապետական կերտուածների ուսումնասիրութեամբ և օգտուել երկու տարբեր ճարտարապետների վերակազմութեան նախագիծներով և բացատրութիւններով։ Բայց ոչ պրոֆ. Մառ և ոչ Հ. Մեսրոպ դեռ ևս բոլորովին չեն լուծել այս տիպի եկեղեցիների ճարտարապետական մանրամասն կազմութիւնը, ուստի և եւրոպացի մասնագէտ քննադատների համար ըստ ամենայնի հասկանալի և ընդունելի չէ ճարտարապետ պ. Թորոմանեանի կազմած վերակազմութիւնը։ Byzantinische Zeitschrift-ի մէջ XVII. 1 և 2 Heft, 1908 Թէոդոր Շմիտ նոյն այս գրքին նուիրած քննադատութեան մէջ յատկապէս զբաղւում է պ. Թորոմանեանի վերակազմութեան նախագծով և կասկածներ է յայտնում ճշդութեան մասին։

Պրոֆ. Մառին յայտնի են այս տիպի հինգ եկեղեցիներ՝ Զուարթնոց և Դագիկի տաճարներից զատ՝ Աբասի տաճարը Կարսում, Ատներսեհ Կիւրապաղատինը Բանում և վերջապէս դարձեալ Ներսէս Գ-ի շինած տաճարը Իշխանի մէջ։

Դագիկի տաճարը կործանուել է աստիճանաբար. փլատուել է այն հաւանականաբար երկրաշարժից, այնպէս որ

կարիք է զգացուել հիմնական նորոգութիւն անելու. Հեղինակը տալիս է թէ նորոգութեան և թէ սկզբնական յատակագիծը։ Վերջինս աւելի պարզ էր։ Տաճարի արտաքին հիմքն էին կազմում երեք աստիճաններ, որ շրջապատում էին ամբողջ շէնքը։ Վերևի աստիճանից սկսւում էին զոյգ կիսասիւներ, որոնք բարձրանալով լուսամուտներից ցած կեղծ կամարներ էին կազմում։ Կիսասիւների թիւը 36 էր, որոնք և ներքին յարկի արտաքին պատը համապատասխան մասերի էին բաժանում։ Թորոմանեանցի վերակազմութեան համեմատ այդ ներքին յարկի վերայ եղել է երկրորդը աւելի նեղ, իսկ երկրորդի վերայ բուն դմբէթը։

Արտաքին կլոր պատերը ամփոփում էին ներսից չորս կիսաշրջաններ խաչաձև՝ իւրաքանչիւր թևը վեց սիւնից, շարուած տաճարի կեդրոնում՝ չորս մեծ սիւների մէջ ընկած տարածութեան վերայ։ Արևելեան կողմը սեղանի բարձրութիւնը կամ բեմն էր, ուր բարձրանում էին հիւսիսային և հարաւային կողմից 5 աստիճաններով։ Բեմի ճակատը (ֆասադը) հիւսիսից և հարաւից վերջանում էր զարդարուն կեղծ կամարով կեղծ զոյգ կիսասիւների վերայ։ Կամարի վերևի մասը զարդանկարուած էր. հիւսկէն գարնէզները զարդարում էին բեմի բարձրութեան ճակատը ամբողջ երկարութեամբ, որոնք կրկնուում էին տաճարի առաջին և երկրորդ յարկի վերայ։ Այդ նոյն գարնէզները կրկնուած են յաճախ նաև Զուարթնոց եկեղեցու վերայ։

Հիւսիս արևմտեան պիլոնի մօտ մնացած է սիւներից մէկի բունը իւր սկզբնական բարձրութեամբ։ Պիլոնի վերևի մասում նկատելի են կամարի հետքերը, որ կապում էր պիլոնը սիւնի հետ սորա գլխի խոյակով։ Սիւներն իրենց խոյակներով կապուած էին միմեանց հետ կամարներով։ Խոյակները օրնամենտներով էին զարդարուած, կային և պարզ, առանց խոյակների սիւներ։ Օրնամենտներով զարդարուած էին յատկապէս տաճարի արտաքին կողմը, դռները, ճակատները, բայց ամենից գերազանցը հարաւային դուռն էր, որից միայն բեկորներ են մնացել։

Զարդաքանդակների մի գօտի պատում էր տաճարի ներքին յարկը կեղծ կամարներից վերև՝ դրսից, մի երկրորդ գօտի պատում էր թմբուկը, վերջապէս լուսամուտների շրջանակներն ու կեղծ կամարները զարդաքանդակներ ունէին։ Հեղինակը տալիս է մի երկու պատկեր այդպիսի զարդաքանդակների. դոցանից նշանաւոր է յատկապէս մի հիւսկէն քանդակ և մի երկրորդը խաղողի տերևներից, վերջինը ծածկում էր կեղծ կամարների միացման մէջ ընկած տարածութիւնը նիզակաձև վերջաւորութեամբ։

Բայց արտաքին զարդերից ամենից նշանաւորը Գագկի արձանն է, եկեղեցու մոդելը ձեռքին։ Արձանի մօտ գտնուում էր շինութեան արձանագրութիւնը 10—11 մէտր բարձրութեամբ, որի բեկորներն են միայն գտնուած։ Արձանը նոյնպէս կոտրտուած է եղել, բայց բարեբաղդաբար գտնուել են բոլոր կտորները, որոնցից վերականգնել է նկարիչ Պոլտորացկին ամբողջութիւնը։ Արձանի բարձրութիւնը 3 արշ. և 2 վերշոկ է. հագուստը և երեսը կարմիր ներկած, միրուքն ու բեղերը սև, չալման սպիտակ՝ կարմիր շերտերով ճակատի կողմը, լայն թեզանիքը նոյնպէս սպիտակ։ Այս գիւտն առիթ է տուել հեղինակին զբաղուելու Հայոց սկուլպտուրայով, յատկապէս մարդկային դէմքի։ Հայոց եկեղեցու մէջ բարձրաքանդակները հազուագիւտ չեն։ Ֆէոդալական շրջանում զինանշանները իշխանական պալատներից անցել են եկեղեցիների վերայ. աշխարհիկ շէնքերից միայն Անիի պարիսպների վերայ եղան գլուխն ունինք բաց բերանով վիշապների մէջ։ Իսկ երկգլխանի արծիւ գտել է Մառը Պահլաւունեաց եկեղեցու գաւթում։ Արծիւ, ճանկերում գառը բռնած, շատ սովորական է Վայոց Զորի եկեղեցիների և մատուռների վերայ, յատկապէս Ռաշեանց ցեղին պատկանող, ինչպէս տեսել ենք անձամբ։ Ապա հեղինակն անցնում է մարդկային ֆիգուրների քանդակներին։ Այդ կողմից նշանաւոր է Մրենը, որի մի խմբաքանդակի մէջ իշխանի գլխի զարդը նման է չալմայի։ Պ. Մառը յայտնում է, որ եկեղեցի շինողների կամ պատրոնների

արձանների և պատկերների համար նիւթեր ունի գրաւոր յիշատակարաններից և անմիջական մնացորդներով։ Իբրև օրինակ յիշում է Հաղբատի և Սանահնի արձանները, որ Սմբատ Բ. Բագրատունունն է համարում և ոչ Դաւրգենին և Կորիկէին, ինչպէս ընդունուած է սովորաբար։* Սմբատի հագուստն ու գլխի զարդը նման է Դագկի արձանին։ Գլխին փաթթոց կամ չալմայ կրում էին, ուրեմն, և Դագկի նախորդները, նոյն իսկ Ռուբինեանը։ Մատրիդում իսպանական թագաւորների շարքում նկարուած է և Լևոն Զ. չալմայով Բասմաջեանի վկայութեան համաձայն։ Ռուբինեանց շրջանի ձեռագիրների մէջ մենք էլ նկարներ ենք տեսել գլխի փաթթոցներով, բայց ոչ հայ իշխանների։ Մառը երկար կանգ է առնում չալմայի ծագումը Բագրատունեաց մէջ բացատրելու համար։ Բագրատունիք կրում էին թագ և չալմայ, առաջինը Արշակունեաց վերանորոգութիւնն էր յիշեցնում այս տան ձեռքով, իսկ երկրորդը արաբական յարաբերութիւնը Բագրատունեաց թագաւորութեան ծագման ժամանակ. խալիֆների ուղարկած թագերը հաւանօրէն չալմաներ էին, որ իրենք ևս կրում էին։ Անկախութեան շրջանում Բագրատունիք պահում են չալմայի գործածութիւնը, ինչպէս ցոյց է տալիս Դագկի արձանը։ Հագուստը նոյնպէս արևելեան կնիք է կրում։ Արձանի մանրամասն ուսումնասիրութիւնը ապագային է թողնում։

Ուրիշ գիւտերից յիշելի են պղնձի երկու ջահեր։ Դոցանից մէկը, որի պատկերը տալիս է հեղինակը, հաղուագիւտ է և թագաձև։ Պատկը մի շրջան է 68 սմ. և 9 մ. դրամագծով, գօտին 13¼ սմ. է, զարդարուած օրնամենտներով։ Գօտու վերայ փորագրուած են 12 շրջանակների մէջ սրաթև արծիւներ և ուրիշ կենդանիներ, որ դժուար է որոշել։ Պատկի վերայ ամրացրած են եղել ճրագկալներ (держалка) երկկարգ, վերևում 30 հատ,

* Հառիճոյ վանքի արևելեան պատի վերայ կայ Զաքարիա և Իւանէ Սպասալարների արձանը։

իսկ ներքևում 8 կլոր շրջանակներով։ Այդ շրջանակների մէջ էին տեղաւորում ճրագները կամ կանթեղները (шкалики)։ Ներքևի ութ ճրագակալների հետ շինուած էին զուգընթացաբար աղաւնու ութ ֆիգուրներ, նոքա թռչում էին պսակի շուրջը հորիզոնական ձևով, փռած թևերով։ Իւրաքանչիւր աղաւնու երկու թևերի և պոչի վերայ կլոր ծակեր կային կանթեղների համար։ Աղաւնիների կտուցներից կախուած էր եռաճիւղ շղթայ, որից կախուում էր կանթեղ երեք կանթերով. իւրաքանչիւր աղաւնի, ուրեմն, չորս կանթեղ ունէր։ Ջահի պսակը կապուած էր վեց պղնձի (обручь) կապերով, որոնք միանում էին վերևի մի օղակի հետ, իսկ այնտեղից կախուած էր շղթայով ամբողջ ջահը։ Կապերի վերայ ևս կային ճրագակալներ (держалки). կապերի միացման տեղից մի ձող էր իջնում դէպի ջահի կեդրոնը երկու զոյգ ճրագակալներով կանթեղների համար։ Այդ ձողից կախուած էր օրնամենտներով զարդարուած ջահը, զարդանկարուած ճրագակալներով, զարդանկարուած կանթեղների համար։ Ձողի ներքևի մասին հագցրած էր շատ նուրբ և գեղեցիկ լուսամփոփ մի կողով, որի մէջ տեղաւորուած էր ապակեայ զամպար։ Կանթեղներն ու զամպարները բաղմերանգ էին և տարբեր մեծութեամբ, բայց այնպիսի համաչափութեամբ, որ ներքևից ոմանք մեծ, ոմանք աղօտ լուսով երևային։ Բոլոր ճրագների և զամպարների թիւը 114 է եղել։

Մենք դիտմամբ տուինք այս մանրամասնութիւնները, որովհետև իրօք շատ հաղուագիւտ և հետաքրքրական գիւտ է այս ջահը հայոց եկեղեցական մանր արուեստի համար։ Ընդհանրապէս շատ չեն մեր ձեռքն անցած հին պղնձի կամ բրոնզի եկեղեցական անօթներն ու զարդերը։ Այս կէտի վերայ հայ հնախօսութիւնը դեռ ևս ուշադրութիւն չի դարձրել և մեզ համար մի terra incognita է այն։ Սակայն կարծում ենք, որ այդպիսի առարկաներ անպակաս չեն, պէտք է միայն հաւաքել և կենդրոնացնել Մ. Աթոռի թանգարանում։ Նրանց ուսումնասիրութիւնը մի առանձին դլուխ կաւելացնի հայոց և ընդհանրապէս

քրիստոնէական արուեստի պատմութեան մէջ։ Մենք ևս ունինք ձեռքի տակ բրոնզի մի փոքրիկ ջահ, չորս ճիւղերով և երկու բուրվառանման կանթեղ, Քրիստոսի գլխաւոր անօրէնութեանց պատկերներով։ Շուտով առիթ կունենանք «Տարազ»-ի մէջ տալու նրանց պատկերն ու նկարագրութիւնը։

Բացի վերոյիշեալ ջահից պրոֆ. Մառը գտել է և մի պղնձի անօթ արաբերէն արձանագրութեամբ ԺԲ. կամ ԺԳ. դարու գործ։ Այդ անօթները պատրաստւում էին Հայաստանում կամ սահմանակից Միջագետքում և Ասորիքում։ Գտել է պղնձի դրամներ բիւզանդական, վիրական և արաբական դրերով, որոնցից շատերը տեղական են և քրիստոնէական։ Վերջին տեսակի դրամները առանձնապէս հետաքրքրական են, որովհետև Բագրատունեաց դրամների խնդիրը մթութեամբ է ծածկուած։

1906 թ. պեղման ժամանակ Մառը գտել է բազմաթիւ առարկաների մնացորդներ՝ տարաբաղդաբար մեծ մասով ջարդուած, ինչպէս խաչեր, ապարանջաններ. հարուստ է Անին յատկապէս հողէ ամաններով գունաւոր և հասարակ։ Ապարանջանները զանազան գոյնի են Խերսոնեսում գտնուածների նման։ Կոնդակով Խերսոնեսի ամանների համար այն կարծիքն է յայտնել, թէ նոքա բերուած են Եգիպտոսից Ասորիքի վերայով կամ Պարսկաստանից Կասպից ծովով։ Անին, եթէ փոխանակող կեդրոնը չի եղել այդ բոլորի, դարձեալ շատ նիւթ կտայ այս խնդիրը լուսաբանելու։

Յիշելի են նաև 6 արձանագրութիւնների գիւտը տեղական նիստ ու կացի հետ կապուած, որոնցից մէկը Սարգիս արքեպիսկոպոսինն է (1245—1276 թ)։ Պահլաւունեաց եկեղեցու գաւթում գտած խաչքարը երկգլխանի արծուի մնացորդով յիշեցինք արդէն։

Անին նիւթ է տալիս նաև պատի նկարչութեան մասին։ Յանուն Լուսաւորչի Տիգրան Յոնենցի շինած եկեղեցու պատերից նկարիչ Պոլտորացկին արտանկարել է նըմուշներ, Լուսաւորչի կեանքը և օտարոտի օրնամենտներ։

եկեղեցական պատի նկարչութեան մասին Մառը գրել էր դեռ ևս 1898 թ. Զանչեանի հրատարակած Братская помощь ժողովածուի մէջ։ Իսկ այժմ աւելի ընդարձակել է իւր ծանօթութիւնները. նրան յայտնի են մի քանի նկարիչների անուններ թ. դարից սկսած և Հայոց եկեղեցական նկարչութեան մասին մի ձեռնարկ։ Վայոց Ձորում ևս մեր ճանապարհորդութեան ժամանակ աւերակ եկեղեցիների պատերի վերայ նկատել ենք հետքեր, որոնք տարաբաղդաբար մինչև այժմ անյայտ են բանասիրութեան և հնագիտութեան համար։ Պ. Մառը չի կասկածում, թէ Հայոց մէջ նկարչութիւն եղել է, դժուարանում է միայն հաստատապէս որոշել, թէ բոլոր հայերին էր այդ յատուկ, թէ միայն քաղկեդոնականներին։ Նա հակուած է վերջինն ընդունելու, որովհետև վերոյիշեալ եկեղեցու նկարները համապատասխան են Լուսաւորչի կեանքի քաղկեդոնական խմբագրութեան, որ պահուած է արաբերէն։ Այդ պատկերներից նա տալիս է իւր գրքի մէջ երկու նմուշ, տախտակ XV կիսակենդանի և կիսաթռչունի մի օրնամենտ և Տրդատի ընդունելութիւնը Վրաց, Աբխազների և Ալանների թագաւորների հետ Լուսաւորչին՝ Կեսարիայից վերադառնալիս. տախտ. XVI.

Յարգելի գիտնականը մեծ աշխատանք է թափել նաև գտած իրերը մաքրելով և դասաւորելով։ Գրքի վերջում կցուած է մի յաւելուած հաւաքած իրերի ցանկը՝ թուով 227+19։ Այս բոլորը պահուած են Անիի թանգարանում։ Գրքի վերջում և բնագրի մէջ զետեղած պատկերները աւելի որոշ գաղափար են տալիս Գագկի տաճարի, աբՀանի և գտած իրերի մասին։ Հայ ժողովրդի վերայ բարոյական պարտք կայ նիւթապէս օժանդակ հանդիսանալու յարգելի գիտնականին իւր պեղումները և Անիի ուսումնասիրութիւնը առաջ տանելու։

Գ. վ. Յովսէփեան